## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 հուլիսի 2026 թվականի N 106-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ « ԹՎՈՎ48 ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ 1 ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ և 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականին նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով և հաշվի առնելով հանրային բաց լսման և քննարկման արդյունքները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Թվով 48 փողոցների և 1 հրապարակի հիմնանորոգում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիոն հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ

1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 7 000 000 000 (յոթ միլիարդ) Հայաստանի Հանրապետության դրամ (100%), որից՝ 4 200 000 000 (չորս միլիարդ երկու հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ (60%) համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2027 թվականի բյուջեի 6/6/1 գործառնական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» և «Նախագծահետազոտական ծախսեր» (5134) տնտեսագիտական դասակարգման հոդվածներից,

2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱՋԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 հուլիսի 2026 թվականի N 107-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ և 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականին նոյեմբերի16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով և հաշվի առնելով հանրային բաց լսման և քննարկման արդյունքները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ««Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիոն հայտին՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ
1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 315 000 000 (երեք հարյուր տասնհինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ(100%), որից՝ 189 000 000 (մեկ հարյուր ութսունինը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ(60%) համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2027 թվականի բյուջեի 6/6/1 գործառնական դասակարգման (5112) «Շենքերի և շինությունների կառուցում» և «Նախագծահետազոտական ծախսեր» (5134) տնտեսագիտական դասակարգման հոդվածներից,
2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 հուլիսի 2026 թվականի N 108-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ««ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ և 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականին նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով և հաշվի առնելով հանրային բաց լսման և քննարկման արդյունքները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մասնաշենքի կառուցում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիոն հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ

1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 165 947 000 (մեկ հարյուր վաթսունհինգ միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ (100%), որից՝ 99 568 200 (իննսունինը միլիոն հինգ հարյուր վաթսունութ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ (60%) համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքըՀայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2027 թվականի բյուջեի 6/6/1 գործառնական դասակարգման (5112) «Շենքերի և շինությունների կառուցում» և «Նախագծահետազոտական ծախսեր» (5134) տնտեսագիտական դասակարգման հոդվածներից,

2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱՋԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

15 հուլիսի 2026 թվականի N 109-Ա

**ԳՈՌ ՍՏԵՓԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գոռ Ստեփանի Ստեփանյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ՖՈԼԿՍՎԱԳԵՆ ՊԱՍՍԱՏ ՍԻՍԻ 2.0 ԹԻ» (VOLKSWAGEN PASSAT CC 2.0 T) մակնիշի, 36 FM 018 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2019 թվականի օգոստոս ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Գոռ Ստեփանի Ստեփանյանին, 2019 թվականի հուլիսի 25-ին Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ և Ուլնեցի փողոցների խաչմերուկում այրվել է, որի արդյունքում մասամբ այրվել է ավտոմեքենայի շարժիչի հատվածը (հիմք՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Գևորգ Գալստյանի կողմից 2026 թվականի մայիսի 15-ին տրված N44/95/4/140456-26 տեղեկանքը, թվով երկու լուսանկարներ): Տրանսպորտային միջոցը ենթակա է հաշվառումից հանման խոտանման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի,8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Գոռ Ստեփանի Ստեփանյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի, Երկ Գիծ 34 շենք, բնակարան 17 հասցեում, հանրային ծառայությունների համարանիշ 2212850808) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2026թվականի հունիսի 09-ին N 8340 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Գոռ Ստեփանի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2019 թվականի օգոստոս ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 500.346 (հինգ հարյուր հազար երեք հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2019 թվականի օգոստոս ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 77.883 (յոթանասունյոթ հազար ութ հարյուր ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 27.023 (քսանյոթ հազար քսաներեք) Հայաստանի Հանրապետության ՀՀ դրամ, 2021 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար մայր գումարը կազմում է 307.085 (երեք հարյուր յոթ հազար ութսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 88.355 (ութսունութ հազար երեք հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 384.968 (երեք հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ տույժը՝ 115.378 (մեկ հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գոռ Ստեփանի Ստեփանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱՋԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2026 թվականի N 110-Ա

## ԱՐՇԱԿ ՄԵԼԻՔՍԵԹԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արշակ Մելիքսեթի Վարդանյանի կողմից լիազորված անձ Մարիամ Աբրահամի Ղուդրատյանը (հիմք՝ լիազորագիր՝ տրված 2026 թվականի մայիսի 08-ին) դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ իր որդուն՝ Արշակ Մելիքսեթի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող «ԲԻԷՄԴԱԲԼՅՈՒ 730 Ի» (BMW 730 I) մակնիշի, 15 OL 571 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2010 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Արշակ Մելիքսեթի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը 2011 թվականի հունվարի 12-ից գտնվում է պետական հաշվառումից ժամանակավոր հանված լինելու կարգավիճակում, այն չի շահագործվել և մինչ օրս չի շահագործվում, ենթակա է հաշվառումից հանման (հիմք՝ տեղեկանք N 386, տրված 2011 թվականի հունվարի 12-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Գյումրիի հաշվառման-քննական ստորաբաժանման ղեկավար Ղուկասյանի կողմից): Արշակ Մելիքսեթի Վարդանյանը և նրա մայրը՝ Մարիամ Աբրահամի Ղուդրատյանն ունեն առողջական խնդիրներ, իսկ դուստրը՝ Մարիամ Արշակի Վարդանյանը սովորում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի բակալավրիատի առկա ուսուցման վճարովի համակարգի «Ֆինանսներ» մասնագիտության կրթական ծրագրի առաջին կուրսում (հիմք՝ թիվ Ե 2556 տեղեկանքը՝ տրված 2026 թվականի մայիսի 05-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տնօրեն Կարեն Պետրոսյանի կողմից, Մարիամ Արշակի Վարդանյանի ստուգման գրքույկը, մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտությունների արդյունքները):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ

հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Մարիամ Աբրահամի Ղուդրատյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի, Ներսես Շնորհալի փողոց 19 շենք, բնակարան 17-18 հասցեում,հանրային ծառայությունների համարանիշ 7301570201) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2026թվականի մայիսի 11-ին N 6720 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.Սահմանել արտոնություն Արշակ Մելիքսեթի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2010 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 293.144 (երկու հարյուր իննսուներեք հազար հարյուր քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից տույժը 2010 թվականի հունվար ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 217.320 (երկու հարյուր տասնյոթ հազար երեք հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 2021 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 75.824 (յոթանասունհինգ հազար ութ հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիամ Աբրահամի Ղուդրատյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱՁԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 հուլիսի 2026 թվականի N 111 -Ա

## ՄՈՐԻՍ ՀԱՅԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մորիս Հայկի Սարգսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆՁ ՍԻԷԼՔԵՅ 320» (MERCEDES-BENZ CLK 320) մակնիշի, 22 VO 101 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2019 թվականի մարտ ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Մորիս Հայկի Սարգսյանը 2019 թվականի հունվար ամսին իրեն անհայտ պայմաններում կորցրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցի 22 VO 101 հերթական համարանիշերը և տեխնիկական անձնագիրը, որոնք ձեռնարկված միջոցառումների արդյունքում չեն հայտնաբերվել: Տրանսպորտային միջոցը չի շահագործվել 2019 թվականի փետրվարի 27-ից, այն գոյություն չունի և ենթակա է հաշվառումից հանման /հիմք՝ N 55/16-1152 տեղեկանքը, տրված 2019 թվականի փետրվարի 01-ին՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ջանիկյանի կողմից/: Մորիս Հայկի Սարգսյանը պարտավորվել է վճարել մինչև 2019 թվականի փետրվար ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանում առաջացած գույքահարկի պարտավորության գումարը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Մորիս Հայկի Սարգսյանի (հաշվառված՝ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծովագյուղ, 1-ին թաղամաս, 3-րդ շենք, բնակարան 19 հասցեում, հանրային ծառայությունների համարանիշ 2914930163) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2026թվականի մայիսի

19-ին N 7285 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Մորիս Հայկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2019 թվականի մարտ ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 544.554 (հինգ հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2019 թվականի մարտ ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 122.283 (մեկ հարյուր քսաներկու հազար երկու հարյուր ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 38.405 (երեսունութ հազար չորս հարյուր հինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար մայր գումարը կազմում է 287.926 (երկու հարյուր ութսունյոթ հազար ինը հարյուր քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 95.940 (իննսունհինգ հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 410.209 (չորս հարյուր տասը հազար երկու հարյուր ինը) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ տույժը՝ 134.345 (մեկ հարյուր երեսունչորս հազար երեք հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մորիս Հայկի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2026 թվականի N 112 -Ա

## ԱՐՄԱՆՈՒՇ ՌՈԲԵՐՏԻ ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմանուշ Ռոբերտի Մովսեսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող «ԼԵՔՍՈՒԶ ԷՆԷՔՍ 350 2.5 ՀԻԲՐԻԴ» (LEXUS NX 350 2.5HYBRID) մակնիշի, 07 LL 707 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2026 թվականի փետրվար ամսից մինչև 2026 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է Արմանուշ Ռոբերտի Մովսեսյանին, ում ամուսինը՝ ոստիկանության փոխգնդապետ Մկրտիչ Ռաֆիկի Մուրադյանը, զոհվել է 2020 թվականի հոկտեմբերի 04-ին քառասունչորսօրյա պատերազմում մարտական գործողությունների ժամանակ, ունի մեկ անչափահաս տղա (հիմք՝ Մկրտիչ Ռաֆիկի Մուրադյանի թիվ ԲԱ307401 մահվան մասին պետական վկայականը, N 29/1200 տեղեկանքը՝ օրենքով սահմանված սոցիալական ապահովության իրավունքներից և երաշխիքներից օգտվելու մասին, տեղեկանքը՝ տրված 05 սեպտեմբերի 2022 թվականին, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ Ենգոյանի կողմից՝ Մկրտիչ Ռաֆիկի Մուրադյանի զոհվելու վերաբերյալ, Ռաֆայել Մկրտիչի Մուրադյանի ԱԲ N 521617 ծննդյան վկայականը):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Արմանուշ Ռոբերտի Մովսեսյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Մատնիշյան փողոց տուն 128/1 հասցեում,հանրային ծառայությունների համարանիշ 5801760296) դիմումը (համանքապետարանում

մուտքագրված 2026թվականի ապրիլի 27-ին N 5952 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.Սահմանել արտոնություն Արմանուշ Ռոբերտի Մովսեսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2026 թվականի փետրվար ամսից մինչև 2026 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարի վճարման նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 148.500 (մեկ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմանուշ Ռոբերտի Մովսեսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2026 թվականի N 113-Ա

## ՏԻԳՐԱՆ ԲՅՈՒԶԱՆԴԻ ՓԱՆՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տիգրան Բյուզանդի Փանոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ իր անվամբ հաշվառված «ՖՈՐԴ ԷՔՍՓԼՈՐԵՐ 4.0» (FORD EXPLORER 4.0) մակնիշի, 34 TD 505 հաշվառման համարանիշով (հիմք՝տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր N HG683342) տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2016 թվականի մարտ ամսից մինչև 2016 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարի և 2015 թվականի սեպտեմբեր ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Տիգրան Բյուզանդի Փանոսյանին, 2016 թվականի մարտի 10-ին վթարի է ենթարկվել, որի պատճառով դարձել է հետագա շահագործման համար ոչ պիտանի, ենթակա է հաշվառումից հանման խոտանման պատճառով: Շիրակի մարզային քննչական վարչությունում 2016 թվականի մարտի 10-ին հարուցվել է թիվ 68102316 քրեական գործը, տրանսպորտային միջոցը տարվել է Ոստիկանության Ախուրյանի բաժնի հատուկ պահպանվող տարածք, որտեղից այն վերադարձվել է 2016 թվականի հոկտեմբերի 08-ին, իսկ 2016 թվականի նոյեմբերի 07-ին դադարեցվել է քրեական հետապնդումը (հիմք՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Սեդա Մխիթարյանի կողմից 2026 թվականի հունիսի 30-ին տրված N 56/56-023/16-2026 գրությունը, 2016 թվականի մարտի 11-ի արձանագրությունը զննում կատարելու մասին, 2016 թվականի նոյեմբերի 07-ի որոշումը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին, ստացական՝ տրանսպորտային միջոցի հետ վերադարձման վերաբերյալ, լուսանկարներ դեպքի վայրից): Տիգրան Բյուզանդի Փանոսյանը պարտավորվել է վճարել 2015 թվականի սեպտեմբեր ամսից մինչև 2016 թվականի փետրվար ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանում և 2016 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանում առաջացած մայր գումարները:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի

դրույթներով և հիմք ընդունելով Տիգրան Բյուզանդի Փանոսյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Կոշտոյան փողոց տուն 14/5 հասցեում, հանրային ծառայությունների համարանիշ 3303760314) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2026թվականի հուլիսի 01-ին N 11998 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Տիգրան Բյուզանդի Փանոսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2016 թվականի մարտ ամսից մինչև 2016 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարի և 2015 թվականի սեպտեմբեր ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 281.655 (երկու հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2016 թվականի մարտ ամսից մինչև 2016 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 42.300 (քառասուներկու հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, 2015թվականի սեպտեմբեր ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար տույժը կազմում է 137.426 (մեկ հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 2021 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 101.929 (մեկ հարյուր մեկ հազար ինը հարյուր քսանինը) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 42.300 (քառասուներկու հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 239.355 (երկու հարյուր երեսունինը հազար երեք հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է Տիգրան Բյուզանդի Փանոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2026 թվականի N 114-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻ ԵՆԹԱԽՄԲԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին՝ իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար, սահմանել հավելավճար՝ ամսական պաշտոնային դրույքաչափի 5% - ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի օգոստոսի 1-ից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 հուլիսի 2026 թվականի N 115-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, 2-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, նկատի ունենալով, որ հավելվածներում նշված հողամասերը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չեն օտարել աճուրդով, հիմք ընդունելով սույն որոշման հավելվածներում նշված դիմումատուների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ հողամասերը տվյալ հողամասերի կադաստրային արժեքով՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի պահպանման ու սպասարկման համար փաստացի զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարել անշարժ գույքերի սեփականատերերին՝ տվյալ հողամասերի կադաստրային արժեքով՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ԼԱԼԱՋԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ
15 հուլիսի 2026 թվականի N 116-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասերը չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում և որոշման հավելվածում նշված դիմումատուների Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

2026թ. հուլիսի 15
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2026 թվականի N 117-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ N 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 28-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի մայիսի 25-ին կայացած Գյումրի քաղաքի Հ.Շիրազի փողոց N 3 հասցեում գտնվող տեղական նշանակության հուշարձան հանդիսացող «Գյումրու պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնանորոգման շինարարական աշխատանքների նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման քննարկման արձանագրությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

